

# Տեղեկատվական ամփոփագիր

## Հիփոթեքային վարկ՝ Բնակարանի ձեռքբերում երկրորդային շուկայից (ԱՄՆ դոլար)

1	Վարկի նպատակը	Ձեռքբերում
2	Վարկի արժույթը	ԱՄՆ դոլար
3	Վարկի նվազագույն և առավելագույն չափը	2'000'000 - 200'000'000 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար
4	Վարկի անվանական հաստատուն տարեկան տոկոսադրույքը	9%
5	Վարկի փաստացի տարեկան տոկոսադրույքը	9,61 – 10.32%
6	Վարկի մարման ժամկետը	120 - 180 ամիս
7	Վարկի ապահովվածության միջոցներ	<ul style="list-style-type: none"> <li>Անշարժ գույք ք.Երևանում, ինչպես նաև Ընկերության կողմից ընդունելի այլ վայրերում</li> <li>Երաշխավոր (Վարկային կոմիտեի որոշմամբ)</li> </ul>
8	Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	<ul style="list-style-type: none"> <li>Մինչև 70%' 30 և ավել տոկոս կանխավճար կատարելու դեպքում</li> <li>Մինչև 100%' լրացուցիչ անշարժ գույքի գրավի դեպքում, բայց ոչ ավել քան գրավադրվող անշարժ գույքերի գնահատված արժեքների 70%</li> </ul>
9	Վարկի մարման եղանակը	Ամսական մայր գումարի հավասարաչափ կամ անուիտետային մարումներով
10	Վարկի սպասարկման միանվագ վճար	Տրամադրված վարկի գումարի 1,2 %
11	Վարկի ձևակերպման վայրը	Ընկերության գրասենյակ
12	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ
13	Վարկի վաղաժամկետ մարում	Լրացուցիչ վճարներ չեն գանձվում
14	Ապահովագրություն	Չի պահանջվում
15	Ժամկետանց պարտավորությունների համար նախատեսված տուժանք	Ուշացման յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ ժամկետանց գումարի և տոկոսի 0,13 տոկոսի չափով
16	Հնարավոր այլ ծախսեր	<ul style="list-style-type: none"> <li>Նոտարական վավերացման հետ կապված ծախսեր՝ 20'000 ՀՀ դրամ</li> <li>Անշարժ գույքի պետական կադաստրի հետ կապված ծախսեր՝ 80'000 ՀՀ դրամ</li> <li>Անշարժ գույքի գնահատման հետ կապված ծախսեր՝ 15'000-20'000 ՀՀ դրամ (անհրաժեշտության դեպքում)</li> </ul>
17	Ժամկետանց պարտավորությունների կատարման հերթականություն	<ol style="list-style-type: none"> <li>Վարկառուի պարտավորությունների չկատարման հետևանքով Ընկերության կողմից կատարված ծախսեր,</li> <li>տոկոսագումարներ,</li> <li>տույժ/տուգանքներ,</li> <li>մայր գումար</li> <li>մնացած այլ պարտքերի մարում</li> </ol>

18	<p>Վարկային հայտի, վարկային դիմումի վերաբերյալ որոշման կայացման և Վարկի տրամադրման ժամկետներ</p>	<p>Վարկային հայտ՝ 1-3 աշխատանքային օր</p> <p>Վարկային դիմում՝ պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 2-5 աշխատանքային օր, որից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է հաճախորդին</p> <p>Վարկի տրամադրում՝ 1-3 աշխատանքային օր</p>
19	<p>Վարկ տրամադրելու դրական որոշման և մերժման բոլոր գործոնները</p>	<p>Վարկի տրամադրման դրական որոշման գործոններն են՝</p> <p style="text-align: center;"><b>Եկամուտներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Բավարար աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտներ (Վարկառուն(Համավարկառուն) պետք է վերջին աշխատավայրում առնվազն 3 տարի հանդիսանա կազմակերպության գրանցված աշխատակից,</li> <li>• Որպես անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունից ստացվող բավարար զուտ եկամուտ (ԱԶ-ի գործունեությունը պետք է լինի գրանցված նվազագույնը 3 տարի, իսկ ԱԶ-ի փաստացի գործունեությունը՝ 2 տարի անընդմեջ)</li> <li>• Վարձակալությունից ստացված եկամուտներ, որոնք ամրագրված են վարձակալության պայմանագրով, ընդ որում վարձակալության պայմանագիրը պետք է կնքված լինի վարկային հայտ ներկայացնելու պահից առնվազն 6 ամիս առաջ և պետք է լինի կնքված առնվազն մեկ տարի ժամկետով (եկամտի հաշվարկում ներառվելու են 30%-ով),</li> <li>• Բանկում ներդրված ավանդային պայմանագրի համաձայն ստացվելիք տոկոսագումարներ, ընդ որում ավանդային պայմանագիրը պետք է կնքված լինի ոչ պակաս, քան վարկային հայտ ներկայացնելու պահից երեք ամիս առաջ և պետք է լինի կնքված առնվազն երկու տարի ժամկետով (եկամտի հաշվարկում ներառվելու են 20%-ով),</li> <li>• Փոխառության պայմանագրի համաձայն ստացվելիք տոկոսագումարներ, ընդ որում փոխառության պայմանագիրը պետք է կնքված լինի ոչ պակաս, քան վարկային հայտ</li> </ul>

ներկայացնելու պահից երեք ամիս առաջ և պետք է լինի կնքված առնվազն երկու տարի ժամկետով (եկամտի հաշվարկում ներառվելու են 20%-ով),

- Փոխանցումների գումարներ(երթե փոխանցումները հիմնավորվում են բանկային քաղվածքների կամ տեղեկանքի միջոցով, իսկ եկամտի հաշվարկի մեջ փոխանցվող գումարները ներառվում է 20%-ով)
- Շահաբաժիններից ստացվող եկամուտ(եկամտի հաշվարկի մեջ ներառվելու են 30%-ով)
- Այլ գրանցված եկամուտներ, որոնք փաստաթղթերով կարող են հիմնավորվել դիմումատուի կողմից(եկամտի հաշվարկի մեջ ներառվելու են 20%-ով):

**Դրական վարկային պատմություն**

- Վարկառուն(համավարկառուն) պետք է ունենա առնվազն 24 ամիս գործող վարկեր,
- Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին վարկային պարտավորությունները չպետք է լինեն ժամկետանց,
- Վերջին 24 ամսում(գործող և մարված) վարկերի ժամկետանց օրերի թիվը չպետք է գերազանցի 10 օրը,
- Վարկառուի(համավարկառուի) և փոխկապակցված անձանց գործող վարկային պարտավորությունները պետք է կազմեն առավելագույնը 3 միլիոն ՀՀ դրամ,
- Վարկառուն(համավարկառուն) և փոխկապակցված անձինք վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին չպետք է ունենան գործող երաշխավորություններ:

**Վարկունակության գնահատման բանաձև՝**

$$ՎԳ = \frac{\text{Ընդհանուր ծախսեր}}{\text{եկամուտ}} * 100 \leq 40\%$$

Ընդհանուր ծախսերը - վարկառուի բոլոր վարկերի գծով վճարումների, վարձակալության վճար, կոմունալ և ընթացիկ ծախսեր, ուսման վարձ, ալիմենտ և այլն:

		<p>Վարկը մերժելու գործոններն են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Եկամտի անբավարար չափը,</li> <li>• Բացասական վարկային պատմությունը(Հաճախորդի, նրա հետ փոխկապակցված անձանց կամ Երաշխավոր(ներ)ի),</li> <li>• Անշարժ գույքի գնորդն ու վաճառողը միևնույն ընտանիքի անդամներ են,</li> <li>• Վարկի օգտագործման նպատակների թերհիմնավորումը,</li> <li>• Տրամադրված տվյալների և փաստաթղթերի անարժանահավատությունը,</li> </ul> <p>Այլ գործոններ:</p>
--	--	--

Այլ դրույթներ՝

- **ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՋ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:
- **ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ 1-3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՈՒՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:
- **ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՋ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:
- **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝** ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ:
- **ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿ՝ [այստեղ](#):

- Արտարժույթով տրամադրվող վարկերի գծով արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա, տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսանում պայմանագրի կնքման օրվա կամ նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքը:

Տոկոսադրույքի հաշվարկների իրականացման համար տարին ընդունվում է 365 օր:

- **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՁ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ [www.fininfo.am](http://www.fininfo.am):
- Վարկառուի կողմից իր պարտավորությունները չկատարելու դեպքում երաշխավորը պարտավորվում է վճարել Վարկառուի փոխարեն, ինչպես նաև վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է երաշխավորը գրկվի իր սեփական գույքից:
- Վարկային պայմանագիրը կնքելուց առնվազն 7 օր առաջ Ընկերության կողմից հաճախորդին է տրամադրվում վարկային պայմանագիր կնքելու առաջարկը և վարկային պայմանագրի նախագիծը: Վարկային պայմանագրի առաջարկը ուժի մեջ է 7 աշխատանքային օր՝ հաճախորդին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
- Դուք իրավունք ունեք հաղորդակցվել <Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ> ՓԲԸ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:
- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ

տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ (նման պահանջի առկայության դեպքում):

- <Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ> ՓԲԸ կողմից քաղվածքների, փաստաթղթերի կրկնօրինակների և տեղեկանքների տրամադրման սակագներ՝ [այստեղ](#):

Ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից